

## ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՅՔ Կիրակի, 2 Նոյեմբերի, 2008

Միացեալ Նահանգների Դեմոկրատական կուսակցութիւնից նախագահական թեկնածու Բարակ Օբաման վերահաստատել է իր յանձնառութիւնը՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ այդ հարցով Կոնգրէսին ներկայացուած թիւ 106 բանաձեւի վաւերացման ուղղութեամբ: Ուրբաթ, Նոյեմբերի 31-ին, այսինքն նախագահական ընտրութիւններից հազիւ չորս օր առաջ նախագահական եւ փոխնախագահական թեկնածուներ, սենատորներ Բարակ Օբամայի եւ Ջօ Բայդընի կողմից հրապարակուած համատեղ յայտարարութեան մէջ նշուած է, որ «Բարակ Օբաման ամերիկահայութեան հետ կիսում է ցեղասպանութեանը վերջ դնելու սկզբունքային յանձնառութիւնը, սկսելով աշխարհի պատմութեան մէջ գործադրուած ցեղասպանութիւնների ողբերգական փաստերը ճանաչելու գործընթացով: Որպէս Սենատոր, Օբաման թիկունք է կանգնել ամերիկահայութեանը, կոչ անելով Թուրքիային, որ ճանաչի Հայոց Ցեղասպանութիւնը: Նա երկու տարի առաջ քննադատել է Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարութեանը՝ Հայաստանում ամերիկեան դեսպան Ջան Իվանզին պաշտօնազրկելու համար, այն բանից յետոյ, երբ դեսպան Իվանզը գործածեց «ցեղասպանութիւն» արտայայտութիւնը՝ 1915 թուականի բազմաազար հայերի բնաջնջումը բնութագրելու համար: Միացեալ Նահանգների արտագործնախարարութեանը յղած իր գրութեան մէջ Օբաման շեշտել էր, որ Հայոց Ցեղասպանութիւնը ո՛չ թէ անհիմն պնդում, անձնական կարծիք կամ տեսակէտ է, այլ բազմակողմանիօրէն փաստագրուած ճշմարտութիւն է, որը վաւերացուել է պատմական անուրանալի փաստերով: 1915-1923 թուականներին Օսմանեան կայսրութեան կողմից գործադրուած Հայոց Ցեղասպանութիւնը պատճառ դարձաւ շուրջ երկու միլիոն հայերի տեղահանմանը, որոնցից մօտաւորապէս մէկ ու կէս միլիոնը բնաջնջուեցին,- ընդօժուում է յայտարարութեան մէջ եւ աւելացում,- Բարակ Օբաման հաւատում է, որ մենք պէտք է ճանաչենք այս ողբերգական ճշմարտութիւնը եւ հաստատապէս զօրակցենք հայ-ամերիկեան յարաբերութիւններին, որոնք կը նպաստեն մեր ընդհանրական անվտանգութեանը եւ կը հզօրացնեն Հայաստանի ժողովրդավարական գործընթացը»: Թուրքական ծանր ճնշումներին եւ Թուրքիայի կողմից գործադրուող լրբիստական բազմակողմանի փորձերին հակառակ, Բարակ Օբամայի եւ Ջօ Բայդընի համատեղ յայտարարութեան մէջ նաեւ նշուած է, որ «Միացեալ Նահանգներն ու համաշխարհային համայնքը պէտք է վերյիշեն անցեալը եւ դասեր քաղեն մարդկութեան դէմ գործադրուած անցեալի ոճրագործութիւններից, երաշխաւորելով, որ այլեւս չեն կրկնուելու այդ նախճիրները: Դժբախտաբար, դեռ մինչեւ այսօր, շարունակուում են ցեղասպանութիւնները, սպառնալով մարդկութեանն ու մեր ընդհանրական անվտանգութեանը: Սուղանում ականատես ենք լինում նոյնանման բիրտ մարտավարութիւնների՝ տեղահանութեան, սովամահութեան, եւ զանգուածային ոչնչացումների գործադրմանը, որոնք Օսմանեան իշխանութիւնների կողմից կատարուեցին հայութեան դէմ, 1915 թուականին: Որպէս նախագահ, Օբաման կը շարունակի պահպանել Հայաստանին տրուող ամերիկեան օժանդակութիւնը: Միացեալ Նահանգների համար Հայաստանը համարուում է արժանահաւատ գործընկեր՝ ահաբեկչութեան եւ ծայրայեղականութեան դէմ պայքարում: Օբամայի վարչակազմը խթան կը հանդիսանայ Հայաստանի բարգաւաճմանն ու զարգացմանը, առեւտրական գործառնութիւնների ու նաշանկէտային օժանդակութեան ընդլայնմամբ: Նա նաեւ կը հզօրացնի քաղաքական, ռազմական ու մշակութային կապերը Միացեալ Նահանգների ու Հայաստանի պետութիւնների միջեւ»,- եզրափակել է յայտարարութիւնը:

Այս լուրերը տրամադրուում են  
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations@ARF1890.com](mailto:PublicRelations@ARF1890.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրուելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: